

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՖԱՐՏՈՇԻՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ
ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Նախնական գնահատման հայտ

«ՖԱՐՏՈՇԻՆ» ՍՊԸ տնօրեն

_____ Բ.Գարոյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՂԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ	3
1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	3
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.....	5
2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ	5
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	6
3.1. Տեղադիրքը և աշխարհագրական պայմանները.....	6
3.2. Շրջանի երկարաբանական կառուցվածքը.....	9
.....	11
3.3. Կլիմա.....	12
3.4. Հողերը.....	14
3.5. Ջրային ռեսուրսներ	15
3.6. Մթնոլորտային օդ	15
3.7. Կենսաբազմազանություն.....	16
3.7.1. Բուսական աշխարհը.....	16
3.7.2. Կենդանական աշխարհ	16
3.7.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	17
3.7.4. Պատմամշակութային միջավայր	17
4. ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	17
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	19
5.1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի վերաբերյալ	19
5.2. Օգտակար հանածոի բնութագրերը	19
5.2.1. Միներալային և քիմիական կազմը	19
5.2.1. Տուֆերի ֆիզիկամեխանիկական հատկությունները.....	20
5.3. Հանքավայրի արտադրողականությունը/հզորությունը	21
5.4. Հանքավայրի շահագործման տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները... ..	21
5.5. Օգտագործվող նյութերը և բնառեսուրսները	22
5.6. Սանիտարապաշտպանիչ գոտի (ՄՊԳ).....	23
6. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲՍՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	25
6.1. Հանքավայրի ելակետային հետազոտության միջոցառումները մինչև նախատեսվող գործողության սկսելը	25
6.2. Մթնոլորտային օդ.....	25
6.3. Մակերևութային և ստորգետնյա ջրեր.....	26
6.4. Հողածածկ	26
6.5. Կենսաբազմազանություն	27
6.6. Պատմամշակութային արժեքներ	28
6.7. Սոցիալական ազդեցություն.....	28
6.8. Փոխհատուցում.....	29

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՂԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

a. Ձեռնարկողի անվանումը՝ «Ֆարտոշին» ՍՊԸ

b. Ձեռնարկողի գտնվելու վայրը՝ ՀՀ, Երևան, Հրաչյա Բոչարի փողոց, 14-65

«Ֆարտոշին» ընկերությունը զբաղվում է հիմնականում տուֆերի արտադրությամբ ու մշակմամբ:

Ստորև քաղվածք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների կայքում տեղադրված առ 01.04.2018 թ. ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մասին աղյուսակից:

Աղյուսակ 1. Տեղեկատվություն
օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրված
ընդերքօգտագործման իրավունքների մասին

N	Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրը	Թույլտվության համարը	Գործունեության նպատակը	Թույլտվության տրամադրման ամսաթիվը	Թույլտվության գործողության ժամկետի ավարտը	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, կնքման ա.ա.տ.
32	«ՖԱՐՏՈ ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամաս	ԵՀԹ-29/275	Երկրաբանական ուսումնասիրություն	07.11.18թ.	07.11.2019թ.	Պ-275 07.11.18թ.

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումը՝

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի շահագործում:

Նախատեսվող գործունեության նպատակը.

Տուֆերի հանքավայրում հանքաքարի արդյունահանում շինանյութերի՝ բլոկերի և խճի արտադրության համար, որը կարող է օգտագործվել շինարարական աշխատանքների համար, հաշվի առնելով հանքաքարի ֆիզիկամեխանիկական հատկությունները: Ընկերությունը նախատեսում է հանքաքարը օգտագործել ուղիղ կտրվածքի պատքարի արտադրության համար սեփական հումքային հենք ստեղծելու նպատակով:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Նախատեսվող գործունեության նախագծման և իրականացման ընթացքում հանքարդյունահանողը պետք է ուղղորդվի ՀՀ իրավական և նորմատիվային ակտերի պահանջներով : Դրանցից հիմնականներն են.

- Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք
- Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք
- Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք
- “Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014)
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք
- Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք
- Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք
- Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք
- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք
- Թափոնների մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք:

Ինչպես նաև դրանցից բխող ՀՀ կառավարության որոշումների և այլ ենթաօրենսդրական ակտերի պահանջներով: Դրանց թվում.

- ՀՀ կառավարության 20.01.2005թ. «Ջրաէկոնոմիկայի միջոցառումների մասին» ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵԲԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՋՐԱՊԱՀՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ» N 64-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 02.11.2017թ. «Հողի ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1404-Ն որոշում
- ՀՀ կառավարության 14.12.2017թ. «Հողերի ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 750-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1643-Ն որոշում
- ՀՀ կառավարության 14.08.2008թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 967-Ն որոշում
- ՀՀ կառավարության 29.01.2010 թվականի «ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 29.01.2010 թվականի «ՀՀ բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշում
- ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 781 որոշում:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Տեղադիրքը և աշխարհագրական պայմանները

Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասը վարչատնտեսական առումով գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանում, Բաղրամյան ավանից 4 կմ հարավ-արևմուտք և զբաղեցնում է 3.64 հա տարածք:

Հողատարածքի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն: Վարձակալված հողամասը զբաղեցնում է 7,4247 հա տարածք /վկայականը պցվում է/ և անբողջությամբ ընդգրկում է Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի տարածքը:

Բաղրամյան ավանը Արմավիր քաղաքի հետ կապված է 18 կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով: Մոտակա բնակավայրերն են Բաղրամյան ավանը, Արաքս, Կարմրաշեն և Քարակերտ գյուղերը, որոնք հանքավայրից գտնվում են 3-8 կմ հեռավորության վրա:

Մորֆոլոգիական տեսակետից, շրջանը գտնվում է նախալեռնային և հարթավայրային գոտիների միջանկյալ տարածքում և բնորոշվում է փոքր թեքությամբ բլուրների և ոչ խորը ձորակների առկայությամբ: Հանքավայրը գտնվում է 1000-1080մ բարձրության վրա, որի բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս հանքավայրի շահագործումը կատարել ողջ տարվա ընթացքում:

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ. թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04 – Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր»-ի հավելված 2-ի (Հի համայնքներն ու բնակավայրերն ըստ սեյսմիկ գոտիների ցանկը), Արմավիրի մարզի Բաղրամյան անունով երկու գյուղերն էլ (Բաղրամյանի շրջան և Էջմիածնի շրջան) գտնվում են առաջին սեյսմիկ գոտում, որտեղ $A=0.3g$ (գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A , ազատ անկման g արագացման մասերով):

Օրոգրաֆիական տեսակետից հանքավայրի շրջանը գտնվում է Արագած լեռան հարավային լանջի դեպի Արարատյան դաշտավայրի ցածրադիր մասերի անցման գոտում, որն այստեղ ներկայացված է հարթավայրաբլրային ռելիեֆով:


Տարածքը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով՝ ARM WGS-84 համակարգով.

- | | |
|----------------|-------------|
| 1. X - 4450230 | Y - 8399987 |
| 2. X - 4450279 | Y - 8400131 |
| 3. X - 4450325 | Y - 8400269 |
| 4. X - 4450425 | Y - 8400236 |
| 5. X - 4450319 | Y - 8399888 |

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ


(հատված K-38-136-Ե-Ե թերթից)

Մասշտաբ 1:25000



Բաղրամյանի հրաբխային տուֆերի հանքավայր

Բաղրամյանի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամաս



Նկար 1. Մակերևութային թերությունները

3.2. Շրջանի երկարաբանական կառուցվածքը

Հանքավայրը (Բաղրամյանի տուֆային դաշտը) գտնվում է Արագած լեռան հարավային լանջի դեպի արարատյան դաշտավայրի ցածրադիր մասերն անցման գոտում, շրջան, որի երկրաբանական կառուցվածքն ուսումնասիրվել է հետևողականորեն և բազմակողմանի, ինչպես հայկական լեռնաշղթայի, այնպես էլ հիշյալ դաշտավայրի ուսումնասիրողների կողմից:

Հաշվի առնելով սույն աշխատանքի հետ առնչվող Արագած հրաբխի կենտրոնական և երկրորդական օջախների հետ կապված հրաբխային տուֆերի, խարամների և լավային ապարների ուսումնասիրությունները, անհրաժեշտ է նշել տարբեր ժամանակներում այդ հարցերով զբաղված ուսումնասիրողներին, որոնցից են Կ. Պաֆֆենհոլցը, Ա. Զավարիցկին, Ա. Ասլանյանը, Վ. Ամարյանը և ուրիշներ: Մասնավորապես Հայաստանի չորրորդական հրաբխային տուֆերի տարատեսակների, դրանց առաջացման պայմանների, օջախների, տարածման և այլ հարցերի ամփոփ պարզաբանումները

տրված են Վ. Ամարյանի դիսերտացիոն աշխատանքներում, իսկ նրա կազմած 1:50000 մասշտաբի քարտեզում արտացոլված են շրջանի երկրաբանական կառուցվածքի ներկայիս պատկերացումները: Նկատի ունենալով այդ, սույն հաշվետվությունում որպես հանքավայրի շրջանի քարտեզ ներկայացված է պատճենահանված այդ քարտեզից:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միոցենից մինչև չորրորդականը ներառյալ հասակի ապարներ:

Տեղամասի հետախուզման ժամանակ հատուկ հիդրոերկրաբանական աշխատանքներ չեն կատարվել:

Երկրաբանահետախուզական աշխատանքներին զուգընթաց կատարվել են հիդրոերկրաբանական դիտարկումներ: Դիտարկումներով պարզվել է ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հետախուզափորվածքներում, ինչը բացատրվում է տուֆերի խիստ ջրաթափանցելությամբ:

Ջրերի հոսքը դեպի ապագա բացահանք հնարավոր է միայն մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնց տարեկան միջին քանակը Հիդրոմետվարչության բազմամյա դիտարկումների տվյալների համաձայն կազմում է շուրջ 400 մմ:

Հաշվի առնելով հարակից Բաղրամյանի տուֆերի շահագործման փորձը, ինչպես նաև տեղամասի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները և ապարների բարձր ջրաթափանցելիությունը, կարելի է համոզված լինել, որ բացահանք ներթափանցող ջրերի հիմնական մասը կենթարկվի բնական դրենաժի, իսկ մնացածը ապարի ճեղքերով կթափանցի խորը հորիզոններ:


Տեղամասի տարածքում դրա շահագործումը բարդացնող ջրհեղեղային հոսքեր չեն արձանագրվել:

Տուֆերն այստեղ ևս, ինչպես Հայաստանի չորրորդական մյուս հանքավայրերում, ունեն գրեթե հորիզոնական տեղադրմամբ շերտաձև տեսք, օգտակար հաստվածքի միջին հզորությունների 3.6-4.3մ տատանումների սահմաններում:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը բավականին պարզ է: Դրանում մասնակցում են չորրորդական և վերին պլիոցենի հասակի ապարներ:

3.3. Կլիմա

Ուսումնասիրվող շրջանը ունի չոր ցամաքային կլիմա և ջերմաստիճանի զգալի տատանումներով: Տարվա միջին ջերմաստիճանը հասնում է $+8^{\circ}\text{C}$, մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը հասնում է 400-500 մմ:



Նկար 3. Կլիմայական գոտիների քարտեզ

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Արմավիրի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20.0	12.9	5.7	-0.9	11.6	-31	41

Աղյուսակ 2.2 Օդի հարաբերական խոնավությունը Արմավիրի օդերևութաբանական կայանի տվյալներով

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արմավիր	870	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Արմավիրի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Տեղումների Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ														Ձնածածկույթ, մմ		
															Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը	Տարվա ձնածածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը
	Ըստ ամիսների																
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Արմավիր	18	19	25	32	44	26	12	9	11	25	23	16	260	42	38	92	
	19	21	26	37	42	21	38	31	35	30	30	20	42				

3.4. Հողերը

Արմավիրի մարզի հիմնական հողային տիպերն են *ռոտգելի մարգագետնային գորշ, կիսանապատային գորշ և հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողերը*: Տեղ-տեղ առկա են նաև մայրական ապարների ելքերը:

Ռոտգելի մարգագետնային գորշ հողեր

Ռոտգելի մարգագետնային գորշ հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի 800-950 մ բարձրության տարածքում, ինչպես մարդու դարավոր գործունեության, այնպես էլ գրունտային ու մակերեսային խոնավացման ռեժիմների համատեղ ներգործության պայմաններում Այս տիպի հողերի ընդհանուր տարածքը Արմավիրի մարզում կազմում է 23 604 հա:

Կիսանապատային գորշ հողեր


Մարզի հյուսիս-արևմտյան մասում իմնական հողատիպը՝ կիսանապատային գորշ հողերն են, որոնք զարգանում են նախալեռնային գոտու 850-1250 մ բարձրության սահմաններում: Արմավիրի մարզում դրանց տարածքը կազմում է 16060 հա:

Հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողերը

Այս հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի այն հատվածներում, որտեղ գետնաջրերը հանքայնացված են և գտնվում են գետնի մակերեսից 1-2.5 մ խորության վրա: Դրանց ընդհանուր մակերեսն Արմավիրի մարզում կազմում է 9.15 հազ. հա:

Մայրական ապարների ելքեր:

Այս ապարների ելքերի տարածքն Արմավիրի տարածաշրջանում կազմում է 1681 հա:



Նկար 4. Հողածածկի բնութագրերը

3.5. Զրային ռեսուրսներ

Տարածաշրջանը բնորոշվում է աղքատ գետային ցանցով, որտեղ որոգման և տեխնիկական նպատակներով օգտագործվում են Թալինի և մասամբ Արմավիրի ջրանցքների ջրերը, իսկ գարնանը և աշնանը երբեմն սելավատարինը: Խմելու ջրի հարցը այստեղ նույնպես լիովին լուծված չէ և հաճախ այդ պահանջները բավարարում են մոտակա բնակավայրերից ավտոմեքենաներով:

Ուսումնասիրվող տարածքի բոլոր գետերը համարվում են Արաքս գետի ձախ վտակները:

Հիմնական ջրային ռեսուրս՝ Մաստարայի Սելավ գետը դիտարկվում է Ախուրյանի ջրվազանային կառավարման տարածքի Մեծամոր գետի գետավազանում:

Սելավ-Մաստարա գետի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 1635 կմ²: Գետի ակունքն ընկած է Արագածի լեռնազանգվածի հարավային լեռնալանջերի վրա՝ 3100-3300 մ բարձրություններում, իսկ ավազանի ամենացածր կետը ընկած է Մեծամոր գետի ակունքներին մոտ տարածքում՝ 849 մ բարձրության վրա:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: Սակայն Մաստարայի Սելավ գետի վրա ՊՈԱԿ-ը չունի ջրի որակի դիտարկման կետ և հետևաբար բացակայում են ջրի որակի մասին տվյալները:

Հանքավայրի մերձակա տարածքով հոսում է Թալինի ոռոգման ջրանցը, որի մետակա հատվածից հեռավորությունը կազմում է 150 մ:

3.6. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից:

Սակայն Բաղրամյան բնակավայրում և մոտակա այլ գյուղերում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՊՈԱԿ-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուլեցույց¹: Ըստ այդ ուղեցույցի

1 EIMC N 15-1/14 ՀՀ շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին. Տեղեկանք, օդային ավազան, էջ 22

² ՀՀ բնապահպանության նախարարության “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ. “ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները” ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են²

Փռշի՝ 0.2 մգ/մ³;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;

Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;

Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

3.7. Կենսաբազմազանություն

3.7.1. Բուսական աշխարհը

Հանքավայրի տարածաշրջանը *վերընթաց լանդշաֆտային գոտիներից* հիմնականում զբաղեցնում է *Կիսանապատային լեռնահարթավայրային /500-1000 մ/ և Չոր տափաստանային՝ ցածր լեռնային /1000-1600 մ/* գոտիները, որոնք տեղ-տեղ ներթափոնցում են իրար մեջ: *Բուսական համակեցությունների* տեսակներն են.

ա/Կիսանապատային բուսականություն

Օշինդրա- էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl.

բ/ Անապատային բուսականություն

Հալոֆիլ, մասնակցությամբ՝ *Salsola ericoides* Bieb., *S. dendroides* Pall., *S. nitraria* Pall., *Halocnemum strobilaceum* (Pall.) Bieb.

Տարածքի որոշ հատվածով անցնում է նաև ոռոգման ջրանցք, որի եզրով ևս աճում են խոնավասեր բուսատեսակներ:

Տարածքի մի մասը ծածկված է քարակույտերով, պատված իրենց հատուկ պետրոֆիլ բուսականությամբ:

Անմիջապես հանքավայրի տարածքը գործնականում զուրկ է բուսածածկից: Համաձայն գրականության տվյալների այստեղ չեն հանդիպում ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:

3.7.2. Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում հանդիպում են ամենուրեք տարածված հետևյալ կենդանիները. ողնաշարավորներից լճագորտը, ժայռային մողեսը, սովորական լորտուն, թռչուններից՝ տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը, կրծողներից սովորական և հասարակական դաշտամուկը, գիշատիչներից՝ գայլ, աղվես, քարակզաքիս, աքիս, անողնաշարավորներից անձրևորդ, մրջյուններ, մեղու, ծղրիդներ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, որոշ կապտաթիթեռներ, կաղամբաթիթեռ, մոծակ, սովորական սենյակային և դաշտային ճանճեր:

Անմիջապես հանքավայրի տարածքում վայրի կենդանիների ապրելավայրեր չեն հայտնաբերվել: Համաձայն գրականության տվյալների այստեղ չեն նկարագրվում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ:

3.73. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Բաղրամյանի հանքավայրի տարածքի անմիջական մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ: Հանքավայրին մոտակա՝ «Որդան կարմիր» պետական արգելավայրը հանքավայրից գտնվում է ավելի քան 30 կմ հեռավորության վրա:

3.7.4. Պատմամշակութային միջավայր

Արմավիրի մարզը հարուստ է պատմության և մշակույթի հուշարձաններով: Այդ հուշարձանները ներկայացնում են տարածշրջանում հայտնի աշխարհիկ և հոգևոր գործառնություն ունեցող հուշարձանների բոլոր տեսակները: Դրանք են հնագույն բնակատեղիներ, քարեդարյան կացարաններ, միջնադարյան գյուղատեղիներ, պաշտպանական, հոգևոր, տնտեսական կառույցներ, գերեզմանոցներ, կոթողներ և խաչքարեր և այլն: Ժամանակագրական առումով նրանք ընդգրկում են վաղնջական ժամանակներից մինչև մեր ժամանակները:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ նախնական ուսումնասիրության ընթացքում հանքավայրի տարածքում պատմամշակութային հուշարձաններ չեն հայտնաբերվել:

4. ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արմավիրի մարզը գտնվում է հանրապետության արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան–Արմավիր, Երևան–Քարակերտ և Երևան–Գյումրի, ինչպես նաև Երևան–Թբիլիսի երկաթուղին: Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Անասնաբուծության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկալնդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման

ուղղություններում: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: 2019թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 5.2%,
- գյուղատնտեսություն՝ 20.9%,
- շինարարություն՝ 8.2%,
- մանրածախ առևտուր՝ 3.5%,
- ծառայություններ՝ 1.6%:

Ազդակիր համայնք

Համայնքի ներկայիս անվանումը - Բաղրամյան /Բաղրամյան/

Համայնքի պատմական անվանումները - Բաղրամյան /Շրջկենտրոն/

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը - 1984թ.

Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Արևադաշտ, Շենիկ, Մյասնիկյան, Դալարիկ

Համայնքի մակերեսը - 2851,6հա

Հեռավորությունը մայրաքաղաքից -60կմ

Բնակչության թիվը – 1051

Բնակչության կազմը - հիմնականում հայեր

Տնային տնտեսությունների թիվը - 271

Օգտակար հանածոներ – քար

Կրթական հաստատություններ – միջնակարգ դպրոց, մանկապարտեզ

Մշակութային հաստատություններ – գրադարան, երաժշտական դպրոց

Մարզական հաստատություններ – չկան

Արտադրական ձեռնարկություններ – քարի վերամշակման

Բնակչության հիմնական զբաղմունքը – հողագործություն, անասնապահություն

Հոգևոր կառույցներ - նախատեսված է եկեղեցու կառուցում

Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Թալինի ջրանցքի ջրերով:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Գյուղատնտեսական ոլորտում կիրառվում է վարձու աշխատանքը:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի վերաբերյալ

Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասը զբաղեցնում է մոտ 3,64 հա տարածք, ձգվելով արևելքից դեպի արևմուտք 380մ երկարությամբ և հյուսիսից դեպի հարավ 126մ լայնությամբ:

Տուֆերն այստեղ, ինչպես Հայաստանի չորրորդական մյուս հանքավայրերում, ունեն գրեթե հորիզոնական տեղադրմամբ շերտաձև տեսք, օգտակար հաստվածքի միջին հզորությունների 3.6-4.3մ տատանումների սահմաններում:

Հրաբխային տուֆերը տեղամասում ներկայացված են միջին չորրորդական հասակի երևան-լենինականյան (պիրոկլաստիկ) տարատեսակով: Դրանք մենաքարային, մեծ մասամբ խիտ կառուցվածքի, մանր ծակոտկենության, համեմատաբար թեթև հրաբխային ապարներ են, ներկայացված հիմնականում շագանակա-կարմրավուն, շագանակա-ծխախոտագույն և սև գույներով: Շագանակա-կարմրավուն տուֆերը կազմում են տուֆային շերտի վերին հորիզոնը, շագանակա-ծխախոտագույն տուֆերը՝ միջին, սևը՝ ստորին:

Մանրադիտակի տակ այդ տուֆերն ունեն բյուրեղլիթոբյուրեղային, լիթովիտոբյուրեղային կառուցվածք: Ապարի հիմնական զանգվածը ներկայացված է հիշյալ երեք գույների հրաբխային ապակով, որը կապակցող նյութ է հանդիսանում բեկորայինի համար:

Բեկորները ներկայացված են միներալների և լեռնային ապարների բեկորներով:

Միներալների բեկորները ներկայացված են պրիզմային, սյունաձև և անկանոն ձևերի պլագիոկլազով, մինչև 0.2-1.88 մմ չափսերի և մոնոկլինալային (ավգիտ) պիրոքսենով մինչև 0.1-0.51 մմ չափսերի:

Ապարների բեկորները ներկայացված են խարամների ու հրաբխային ապակու մինչև 0.5-0.6 մմ չափսերի բեկորներով և անդեզիտաբազալտներով մինչև 1.5 մմ չափսերի:

5.2. Օգտակար հանածոի բնութագրերը

5.2.1. Միներալային և քիմիական կազմը

Հետախուզության տեղամասի տուֆերն ներկայացված են պիրոկլաստիկ (երևան-լենինականյան) տեսակով:

Դրանք մանր ծակոտկենության թեթև և մենաքարային ապարներ են, ներկայացված հիմնականում շագանակա-կարմրավուն, շագանակա-ծխախոտագույն և սև գույներով: Պիրոկլաստիկ տուֆերի կառուցվածքը բյուրեղալիթոբյուրեղային, լիթովիտոբյուրեղային է ապարի կազմում մասնակցում են.

- հիմնական զանգվածը՝ թթու հրաբխային ապակի, ավելի ծակոտկեն խարամների և հրաբխային ապակու բեկորներով;
- ներփակումները՝ պլագիոկլազ, մոնոկլինային պիրոքսենի բյուրեղներ;
- ապարների բեկորները՝ աննշան չափսերի անդեզիտաբազալտներ:

Ըստ քիմիական կազմի տեղամասի տուֆերը բնութագրվում են հիմնական քիմիական միացությունների հետևյալ ցուցանիշներով:

Աղյուսակ 5.1. Տուֆերի քիմիական կազմը

Նմուշի համարը	Օքսիդների պարունակությունները, %%									
	SiO ₂	TiO ₂	Fe ₂ O ₃	Al ₂ O ₃	CaO	MgO	SO ₃	K ₂ O	Na ₂ O	ԿՇՊ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	62.80	0.77	4.86	16.58	3.48	2.55	< 0.10	3.45	4.20	1.44
2	63.25	0.48	4.77	17.11	3.32	2.10	< 0.10	3.72	3.81	1.38
Միջինը	63.03	0.63	4.82	16.85	3.40	2.33	< 0.10	3.59	4.01	1.41

Ինչպես միներալային, այնպես էլ քիմիական կազմի տեսակետից տեղամասի տուֆերը ողջ տարածքում միատարր են և ըստ թթվայնության պատկանում են անդեզիտադացիտային և դացիտային կազմի ապարներին:

5.2.1. Տուֆերի ֆիզիկամեխանիկական հատկությունները

Ստորև, 5.2 աղյուսակում բերվում են տուֆերի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրությունների ամփոփ տվյալները

Աղյուսակ 5.2. Տուֆերի ֆիզիկամեխանիկական հատկությունները

Հ/Հ	Ցուցանիշները	Չափման միավորը	Ցուցանիշների մեջությունը		
			նվազագույնը	առավելագույնը	միջինը
1	2	3	4	5	6
1.	Միջին խտությունը	կգ/մ ³	1474	1533	1499
2.	Ծակոտկենությունը	%	39.40	42.29	41.11
3.	Զրակլանելիությունը	%	-	-	15.53
4.	Փափկեցման գործակիցը	-	0.76	0.77	0.77
5.	Սառնակայունության գործակիցը	-	0.77	0.78	0.77
6.	Ամրության սահմանը սեղմման ժամանակ.				
	- չոր վիճակում	կգ/մ ²	59	75	65
	- ջրահագեցված վիճակում	կգ/մ ²	53	59	56
	- 15 փուլսառեցումից հետո	կգ/մ ²	-	-	44

Բերված տվյալները վկայում են, որ տեղամասի տուֆերը լիովին բավարարում են «Պատքարեր լեռնային ապարներից» 4001-2013 ԳՈՍՏ-ի պահանջները և պիտանի են ուղիղ կտրվածքի պատքարի արդյունահանման համար:

5.3. Հանքավայրի արտադրողականությունը/հզորությունը

Հիմք ընդունելով Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների մասին՝ 01.04.2019 հաշվետվության լրացմամբ ներկայացված տվյալները ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 03.11.2020 թվականի թիվ 1554-Ա հրամանով Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի համար հաստատվել են օգտակար հանածոի պաշարները. “B կարգով 141.96 հազ.մ³ քանակով, բլոկների 38.5% միջին ելքով”:

Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի արտադրողականությունը ըստ հանքաքարի, ինչպես նաև մակաբացման ապարների քանակնր, կհաշվարկվեն և կներկայացվեն նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

Ստորև բերված են արտադրողականության նախնական ցուցանիշները:

Աղյուսակ 5.3. Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի արտադրողականությունը

Տեղամասի տարեկան արտադրողականությունն ըստ.	Չափման միավոր	Քանակ
- տուֆային զանգվածի	մ ³	6942
- ուղիղ կտրվածքի պատքարի	մ ³	2673
- մակաբացման ապարների	մ ³	2013
- արդյունահանման թափոնների	մ ³	4269

5.4. Հանքավայրի շահագործման տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Տեղամասի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները միանգամայն բարենպաստ են այն բաց եղանակով շահագործելու համար:

Մակաբացման ապարները ներկայացված են 0.9մ-ից 1.3մ (միջինը՝ 1.15մ) հզորության ավազակավերով և ջարդրտված տուֆերով, որոնց հեռացումը կարող է իրագործվել բուլդոզերով, առանց նախնական փխրեցման:

Մորֆոլոգիական տեսակետից տուֆերն այստեղ ունեն շերտաձև տեսք, գրեթե հորիզոնական տեղադրմամբ:

Տուֆերի օգտակար հաստվածքի հզորությունը տեղամասում տատանվում է 3.6մ-ից 4.3մ-ի սահմաններում:

Տեղամասում հաշվարկված մակաբացման ապարների ծավալը կազմում է 172.7 հազ.մ³, իսկ մակաբացման միջին գործակիցը՝ 0.29 մ³/մ³:

Մակաբացման ապարների ոչ մեծ հզորությունը կանխորոշում է տեղամասի շահագործումը բաց եղանակով:

Հետախուզված տեղամասի տարածքում կարստեր, սողանքներ և այլ բնույթի գեոդինամիկ երևույթներ, որոնք կարող են բարդացնել շահագործական աշխատանքները՝ չեն արձանագրվել:

Ուղիղ կտրվածքի պատքարի արդյունահանումը կիրագործվի քար կտրող CMP-0.26/1 մակնիշի մեքենայով:

Արդյունահանման աշխատանքները բաղկացած են հետևյալ գործողություններից.

- Միաքարի անջատումը զանգվածից,
- Միաքարի հեռացումը հանքախորշից մինչև մասնատման վայրը,
- Միաքարի մասնատումը բլոկների,
- Բլոկների կոպտամշակումը,
- Կոպտամշակված բլոկների և քարերի բարձումը:

Միաքարի անջատումը զանգվածից կատարվում է հորատասեպային եղանակով: Զանգվածի ճեղքում նախատեսվում է կատարել սեպանցքների մեջ տեղադրված սեպերի օգնությամբ: Սեպանցքերը հորատումը կատարվում է հորատման մուրճերով:

Որպես միաքարի անջատման մեխանիզմ օգտագործվում է հորատասեպային հիդրավլիկ կայանքը:

Միաքարի քարշումը հանքախորշից դեպի մասնատման վայրը նախատեսվում է կատարել բուլդոզերի միջոցով:

Միաքարի ճեղքումը բլոկների կատարվում է հիդրավլիկական սեպերի միջոցով, որոնք տեղադրվում են սեպանցքերում:

Բլոկների կոպտամշակումը, նրանց ձև տալու համար նախատեսվում է կատարել հարվածապոկիչ մուրճերի օգնությամբ:

Բլոկների բարձումը, ինչպես ներքին, այնպես էլ վերին ենթաստիճանից կատարվում է ավտոկռունկի միջոցով:

Հերթափոխում մակաբացման ապարների և արտադրական թափոնների հեռացման աշխատանքների համար նախատեսվում է մեկ հատ անվային բարձիչ:

5.5. Օգտագործվող նյութերը և բնառեսուրսները

Հանքի շահագործման ժամանակ կօգտագործվեն տարբեր նյութեր և մեխանիզմներ, որոնց ցանկը և քանակները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության կազմում:

Բնառեսուրսներից նախատեսվում է օգտագործել միայն ջուր՝ հարթակների ջրցանի, հանքաքարի խոնավացման, ինչպես նաև անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Ըստ նախնական պայմանավորվածության ջուրը ավտոջրատար մեքենաներով կբերվի Բաղրամյան գյուղից:

Աշխատակիցների համար կտեղադրվեն տնակներ և կեղտաջրերի հավաքման հոր՝ անթափանց պատերով և հատակով, որի պարունակությունը պարբերաբար կտեղափոխվի մոտակա կոյուղու ցանց:

Ջրօգտագործման հաշվարկները, ինչպես նաև ջրառի աղբյուրները և պայմանները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

5.6. Սանիտարապաշտպանիչ գոտի (ՍՊԳ)

Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերով (CH 245-71) տուֆերի հանքավայրերի համար կիրառելի են երկու կարգավորում.

- 300 մ ՍՊԳ՝ VI-VII կատեգորիայի ապարների համար,
- 50 մ ՍՊԳ՝ առանց պայթեցումների քարի արդյունահանման ձեռնարկությունների համար:

Բոլոր դեպքերում ՍՊԳ ապահովված է, քանի որ մոտակա բնակավայրը գտնվում է ավելի քան 3 կմ հեռավորության վրա:

Ստորև բերված է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի երկրաբանական քարտեզը:

[illegible]

6. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

6.1. Հանքավայրի ելակետային հետազոտության միջոցառումները մինչև նախատեսվող գործողության սկսելը

Հանքավայրի և մերձակա տարածքների բնական միջավայրի ելակետային պարամետրերը ստուգվում են ըստ նախապես սահմանված նմուշառման կետերի և պարամետրերի:

Ուսումնասիրվում է հանքավայրի և շրջակայքի բուսական և կենդանական աշխարհը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների և կենդանիների միգրացիոն ճանապարհների հայտնաբերմանը: Ուսումնասիրության մասին կազմվում է հաշվետվություն:

Ուսումնասիրվում է հանքավայրի հողածածկը, կատարվում է նմուշառում: Չափվում է բերրի հողաշերտի հզորությունը եթե այն առկա է:

Ուսումնասիրությունները կատարվում են տարվա չոր եղանակներին: Բերրի հողաշերտի հզորության չափման և նմուշառման կետերը պետք է ընտրել այնպես, որ այն ճիշտ պատկերացում տա տեղամասի բերրի հողաշերտի հզորության միջին արժեքի մասին: Բերրի հողաշերտի բազմաթիվ նմուշներից կազմվում է ներկայացուցչական միջին նմուշ համաձայն հողի անալիզի և նմուշառման հրահանգների:

Ուսումնասիրվում է հանքային դաշտի ռադիացիոն ֆոնը: Չափումները կատարվում են նույն տեղերում /կորդինատներում/, որտեղ կատարվել է հողի նմուշառում: Չափումները կատարվում են հավաստագրված չափիչ սարքերով: Այս աշխատանքը հարմար է կատարել հողի նմուշառման հետ:

Ուսումնասիրություններ են կատարվում է հանքավայրի տեղամասերում և հարակից տարածաշրջանում /հնարավոր ազդեցության գոտում/ պատմամշակութային և բնական հուշարձանների առկայության ստուգման նպատակով մասնագիտացված կազմակերպության մասնագետի կողմից:

Բոլոր ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվում են հաշվետվությունների տեսքով, որոնք պահպանվում են արխիվում՝ որպես համեմատական տվյալներ շրջակա միջավայրի վրա աշխատանքների փակումից հետո կայուն ազդեցությունը գնահատելու համար:

6.2. Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի աղտոտող հիմնական նյութերը փոշին է և շահագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցների առաջացրած ծխազագերը:

Մակաբացման աշխատանքները պետք է կատարվեն հնարավորինս խոնավ եղանակներին: Չոր եղանակներին ջրցանել արտադրական հրապարակները և գրունտային ճանապարհները: Բացառվում են պայթեցման աշխատանքները:

Ծխագազերի արտանետումներով մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան ծխագազերի վնասակար արտանետումների կլանիչներ:

6.3. Մակերևութային և ստորգետնյա ջրեր

Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում արտադրական նպատակով ջրային ռեսուրսները օգտագործվում են ջրցանման և խոնավացման նպատակով: Անհրաժեշտ է ջրցանի ծավալները այնպես հաշվարկել, որ արտահոսք չառաջանա:

Պետք է նախատեսել, որ արտաքին լցակայանի վերին և կողային մասերում կառուցվեն կյուվետներ և շրջանցող առուներ: Նմանատիպ պաշտպանություն պետք է նախատեսել նաև շինհրապարակների համար:

Անձրևաջրերի հեռացման համար նախատեսված են առուներ նաև մոտեցնող ճանապարհի երկայնքով:

Բոլոր արտահոսքերը պետք է կազմակերպել այնպես, որ դրանք չհոսեն դեպի Թալինի ջրանցք:

6.4. Հողածածկ

Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում խախտվում է հանքավայրի զգալի մասի հողածածկույթը: ՀՀ օրենքների պահանջով շինարարական և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտը հանվում և օգտագործվում է պակաս արդյունավետ հողերի բարելավման համար: Հողի բերրի շերտի վաճառքն արգելվում է /ՀՀ հողային օրենսգիրք հոդված 36, կետ 5/: «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02 11 2017 թ. N 1404-Ն որոշմամբ սահմանվում է օգտահանված բերրի հողի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները: Համաձայն այդ որոշման այն առաջնային կարգով կիրառվում է խախտված հողերի ռեկուլտիվացման նպատակով: Նպատակահարմար է համարվում խախտված տարածքների այն մասում, որտեղ չեն կատարվում աշխատանքներ, ռեկուլտիվացումը ձեռնարկել հնարավորինս առանց հետաձգելու մինչև հանքի վերջնական փակումը:

Ռեկուլտիվացիան կատարվում է երկու փուլով: Տեխնիկական ռեկուլտիվացիայի ընթացքում հետախուզափորվածքները լցվում են արդյունահանված ապարներով,

հարթեցվում և տոփանվում, որից հետո փոխվում է վերին՝ բերրի հողաշերտը: Կենսաբանական ռեկուլտիվացիայի փուլում կատարվում է առաջամարտիկ բուսատեսակների ցանքս և հետագա խնամք՝ պարարտացում և ըստ անհրաժեշտության ոռոգում՝ բուսաբանի կամ գյուղատնտեսի հսկողությամբ և առաջարկով: Կենսաբանական ռեկուլտիվացիայի փուլը կարող է տևել մի քանի տարի:

Հողածածկույթի աղտոտումը վառելիքաքսուկային նյութերով կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակով՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը: Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուկային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացման նպատակով: Տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները կատարել միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում:

Հողի աղբոտումը կանխելու նպատակով արտադրական հարթակներում և աշխատակիցների հանգստյան վայրերում տեղադրվում են աղբամաններ: Առաջացած յուղերի, մետաղի թափոնները /անօգտագործելի պահեստամասեր, մարտկոցներ և անվադողեր/ հավաքել և ուղարկել ուտիլիզացման:

6.5. Կենսաբազմազանություն

Բուսականությանը և կենդանիներին հասցվող վնասը նվազագույնի հասցնելու նպատակով պետք է կիրառվեն հետևյալ հիմնական միջոցառումները.

- Շրջանցող առուների վրայով մարդկանց և կենդանիների անվտանգ անցումը ապահովելու նպատակով ըստ անհրաժեշտության առաջարկվում է տեղադրել կամրջակներ:
- Պետք է բացառվի է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս:
- օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կազավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով,
- ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի N 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում,
- հարակից տարածքների կենսաբազմազանության մշտադիտարկման իրականացում:

6.6. Պատմամշակութային արժեքներ

Հանքավայրի շահագործման ընթացքում պատմամշակութային նշանակություն ունեցող և մարդու գործունեության արդյունք հանդիսացող պատմական հետաքրքրություն ներկայացնող կառույցների, շինությունների, գերեզմանների, իրերի և այլնի հայտնաբերման դեպքում ՀՀ օրենսդրության պահանջով նախատեսվում է դադարեցնել դրանց տարածքում շինարարական աշխատանքները և հրավիրել համապատասխան մասնագետներ, որոնց օգնությամբ կկատարվի հայտնաբերված հուշարձանների ուսումնասիրություն, կոնսերվացում, անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում:

6.7. Սոցիալական ազդեցություն

Հանքավայրի շահագործման աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան:

Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղիներում հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով: Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Մերձակա բնակչության վրա ֆիզիկական ազդեցությունները /աղմուկը, արտանետումներ/ կանխելու նպատակով անհրաժեշտ է կազմել ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության պալն: Բեռնատար մեքենաները պետք էրթևեկեն միայն ցերեկային ժամերին, պետք է ապահովվել հավասարաչափ ժամանակացույց:

Ճանապարհների վրա և բացահանքի մերձակայքում պետք է տեղադրվեն նախազգուշացնող հատուկ ցուցանակներ:

Նախաձեռնողը և համայնքի ղեկավարը կնքում են սոցիալական պայմանագիր, որով նախատեսվում է համայնքի սոցիալական զարգացման միջոցառումների իրականացում: Պարբերական հանդիպումներով պայմանավորվող կողմերը ճշտում են սոցիալական պայմանագրի դրույթների կատարումը, անհրաժեշտության դեպքում շտկում պլանները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նախաձեռնության /հանքի/ փակման ծրագրի և հետագա էկոմոնիթորինգի պայմանավորվածությունների կատարմանը:

6.8. Փոխհատուցում

Սոցիալական և բնապահպանական միջոցառումները թույլ կտան որոշ չափով հատուցել բացասական ազդեցությունները: Բացի այդ նախատեսվում է հատուցել օգտագործումից դուրս եկած հողերի համար:

Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարները կհաշվարկվեն հիմնական նախագծման փուլում:

Բնապահպանական կառավարման պլան

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Ժամկետ	Մոնիթորինգի միջոցառում	
				Մոնիթորինգ	Պատասխանատու
Նախապատրաստական փուլ					
Հանքավայրի տարածքի նախնական ուսումնասիրություն	Զրոյական վիճակ	1/ Հանքավայրի տեղամասերի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրություն 2/ Հանքավայրի տեղամասերի հողածածկի արտաքին ուսումնասիրություն 3/ Հանքավայրի տարածքում պատմամշակույթային և բնական հուշարձանների առկայության ստուգում	Մինչև շահագործում	Ուսումնասիրությունների հաշվետվությունների ստուգում	“Ֆարտոշին” ՍՊԸ և կապալառու կազմակերպություններ
Հանքավայրի շահագործում					
Հանքավայրի շահագործում	1/Փոշու արտանետում	Աշխատանքները կատարել հնարավորինս խոնավ եղանակներին: Չոր եղանակներին ջրել արտադրական հրապարակները:	Կապիտալ շինարարության փուլում	Բացահանքի տարածքում և Բաղրամյան գյուղում իրականացնել օդի աղտոտվածության պարբերական չափումներ	“Ֆարտոշին” ՍՊԸ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
	2/ դիզ. վառելիքի այրման արգասիքների արտանետում	Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան կլանիչներ;	Շահագործման ամբողջ ընթացքում		
	3/Հողերի աղբոտում և աղտոտում դիզ. վառելիքի և յուղերի արտահոսքից	Պահեստները պետք է մշտապես վերահսկվեն` բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը: Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ` վառելիքաքսուքային նյութերի պահեստում/ հետագա վաճառքի համար: Առաջացած մետաղի և ռետինի թափոնը /անօգտագործելի պահեստամասեր և ավտոդողեր/ հավաքել և վաճառել յիջենգավորված ընկերություններին	Շահագործման ամբողջ ընթացքում Շահագործման ամբողջ ընթացքում	Արտաքին զննում Արտաքին զննում	“Ֆարտոշին” ՍՊԸ և կապալառու կազմակերպություններ “Ֆարտոշին” ՍՊԸ և կապալառու կազմակերպություններ

Բնապահպանական կառավարման պլան

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Ժամկետ	Մոնիթորինգի միջոցառում	
				Մոնիթորինգ	Պատասխանատու
Հանքավայրի շահագործում	4/ Հողերի խախտում	Բերրի հողաշերտի օգտահանում և պահեստավորում գործող օրենսդրության պահանջներով:	Կապիտալ շին. փուլում	Բերրի հողի պահեստի ստուգում	“Ֆարտոշին” ՍՊԸ
	5/Մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտում	Շրջակա լանջերից հոսող մակերևութային ջրերի հոսքը դեպի բացահանքերի խոռոչներ և լցակույտի հատակ կանխարգելելու նպատակով բացահանքերի և լցակույտի պարագծով անցկացնել խրամներ և առուներ: 3/Լցակույտի և բացահանքի ամենացածրադիր նիշերից ցածր կառուցել պատվարներ արտահոսող մակերևութային ջրերի պարզարան – ավազան ստեղծելու նպատակով: 4/Արդյունաբերական հրապարակից ցածրադիր նիշում կառուցել հոր-պարզարան: 5/ Բացառել արտահոսքերի հոսքը դեպի Թալինի ջրանցք	Կապիտալ շինարարության փուլում	Խրամների և առուների առկայության ստուգում	“Ֆարտոշին” ՍՊԸ
	6/ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա	3/Լցակույտի և բացահանքի ամենացածրադիր նիշերից ցածր կառուցել պատվարներ արտահոսող մակերևութային ջրերի պարզարան – ավազան ստեղծելու նպատակով: 4/Արդյունաբերական հրապարակից ցածրադիր նիշում կառուցել հոր-պարզարան: 5/ Բացառել արտահոսքերի հոսքը դեպի Թալինի ջրանցք	Շահագործման ամբողջ ընթացքում	Արտաքին գնում	“Ֆարտոշին” ՍՊԸ և կապալառու կազմակերպություններ
	7/ Շրջակա միջավայրի աղբոտում կենցաղային աղբով	Բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս:	Շահագործման ամբողջ ընթացքում	Պարզարան-ավազանի առկայության ստուգում	“Ֆարտոշին” ՍՊԸ Բաղրամյանի համայնքապետարան
	8/ Աշխատակիցների առողջության և	Կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում և սննդի ընդունման կետերում: Կանոնավոր աղբահանում: 1/Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Շինհրապարակում պետք է լինեն	Կապիտալ շինարար-	Պարբերաբար իրականացվող ստուգումներ	“Ֆարտոշին” ՍՊԸ Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին

Բնապահպանական կառավարման պլան

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Ժամկետ	Մոնիթորինգի միջոցառում	
				Մոնիթորինգ	Պատասխանատու
Հանքավայրի շահագործում	անվտանգության վնասում	առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով: Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:	րության փուլում և շահագործման ամբողջ ընթացքում	Արտաքին զննում	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսճական մարմին
		Բոլոր բարձր կառույցները և տրանսֆորմատորային կայանը պետք է ունենան շանթարգելներ և անհրաժեշտության դեպքում՝ հողանցման կոնտուրներ:	Շահագործման ամբողջ ընթացքում	Ստուգման մատյանների առկայություն	“Ֆարտոշին” ՍՊԸ
		Վտանգավոր սարքերը և մեխանիզմները պետք է պարբերաբար ստուգվեն տեխնիկական վիճակի վերաբերյալ	Շահագործման ամբողջ ընթացքում	Արտակարգ իրավիճակների պլանի առկայություն	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսճական մարմին
		Հանքի տնօրինությունը պետք է համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների միջոցով մշակի և հաստատի արտակարգ իրավիճակների և աշխատակիցների տարահանման պլան, որի պետք է առկա լինի աշխատանքային տեղերում	Շահագործման ամբողջ ընթացքում	Հրահանգավորման մատյանի ստուգում	
		Բոլոր աշխատակիցները պետք է հրահանգավորվեն վթարային իրավիճակների և բնական աղետների դեպքում գործողությունների վերաբերյալ:	Ամսական Մշտական	Պարբերական ստուգումներ Պարբերական ստուգումներ	“Ֆարտոշին” ՍՊԸ “Ֆարտոշին” ՍՊԸ

Բնապահպանական կառավարման պլան

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Ժամկետ	Մոնիթորինգի միջոցառում	
				Մոնիթորինգ	Պատասխանատու
Հանքավայրի շահագործում	9/ Սոցիալական խնդիրներ	Հանքի մուտքին և մոտեցնող ճանապարհներին պետք է լինեն համապատասխան ցուցանակներ	Շահա- գործման ամբողջ ընթացքում	Արտաքին զննում	“Ֆարտոշին” ՍՊԸ
		Բեռնատար մեքենաների երթևեկությունը պետք է կատարվի միայն ցերեկային ժամերին: Պետք է կազմվի երթևեկության ժամանակացույց, բացառելու համար միաժամանակ մի քանի տրանսպորտային միջոցների շարժը		Պարբերական ստուգայցեր	“Ֆարտոշին” ՍՊԸ
		Մշակել և ներդնել բողոքների հաշվառման մեխանիզմ		Բողոքների մատյանի առկայություն	“Ֆարտոշին” ՍՊԸ
		Կազմակերպել պարբերական համդիպումներ համայնքի ղեկավարության և բնակիչների հետ		Հանդիպումների արձանագրություններ	“Ֆարտոշին” ՍՊԸ

311 2333



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 4 սեպտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՖԱՐՏՈ ՇԻՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան (Բաղրամյանի շրջ.) հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հողամասի վարձակալության 30.08.2019թ. պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-029-0101-0001

Մակերեսի չափը (հա)՝ 3.3

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 04092019-04-0048, գաղտնաբառ՝ L8GNQLBWDKHF

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

հողամասը տրամադրված է վարձակալության մինչև 30.08.2044թ. տարեկան 69 300 ՀՀ դրամ վարձավճարով

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սոս Թումասյան
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 04092019-04-0048, գաղտնաբառ՝ L8GNQLBWDKHF

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով


Էջ 2/2





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է 4 սեպտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՖԱՐՏՈ ՇԻՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան (Բաղրամյանի շրջ.) հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հողամասի վարձակալության 30.08.2019թ. պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-029-0101-0002

Մակերեսի չափը (հա)՝ 1.4247

Նայատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 04092019-04-0055, գաղտնաբառ՝ 8B1XDP6SAZWM

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

հողամասը տրամադրված է վարձակալության մինչև 30.08.2044թ. տարեկան 29 918 ՀՀ դրամ վարձավճարով

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սոս Թումասյան
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 04092019-04-0055, գաղտնաբառ՝ 8B1XDP6SAZWM

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքի միջոցով

Էջ 2/2

